

Նորա ազգային գործերի մասնակցութիւնից պիտի յիշել, որ
նա անբաժան ընկերն էր իւր հանգուցեալ եղբօր Յովհաննիսին
թէ Յովհաննեան ուսումնարանի հիմնադրութեան գործում և թէ
այդ ուսումնարանը Թիֆլիսում գոնուած մեծագին քարվանսա-
րայով ապահովելում, և ինքը լինելով մշտական պատուաւոր հո-
գաբարձու այդ ուսումնարանի՝ մինչև գրեթէ իւր կեանքի վերջը-
մասնակից էր դպրոցի հոգաբարձութեան գործունէութեան նորա
բարգաւաճման և յառաջադիմութեան գործում:

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան նախագահի-
պաշտօն վարելով երկար տարիներ շարունակ, նա նուրիուած էր
այդ գործին հոգով ու մարմնով, և այդ ընկերութեան ընդարձակ
գործունէութիւնը կարելի է ասել դարձեալ նորան ենք պարտա-
կան. պատահել է մեզ տեսնել օրինակ դէպքեր, երբ այս և այն
պատահներ դիմել են նորան իրեւ Ընկերութեան նախագահի-
միջոցներ տալ Ընկերութիւնից ուսումը շարունակելու; բայց նա
այն աստիճան խնայող է եղել Ընկերութեան կոպէկները, որ ինքը
իր սեպհականութիւնից ապահովել է դիմողների տարեկան թո-
շակները և չէ ցանկացել ծանրանալ Ընկերութեան միջոցների
վրայ:

Իրեւ ապացոյց, որ Բարեգործական Ընկերութեան նպատա-
կը մօտ է իւր սրախն, Ալէքս. Անանեանը կենդանութեան ժամա-
նակ նուրիեց այդ ընկերութեան երեսուն հազար ոուրլի:

Բացի ուրիշ շատ բարեգործութիւններից, պէտք է յիշել
այստեղ և Քութայիսի հայոց դպրոցներին իւրովսանն նիւթա-
պէս և բարոյապէս օժանդակելու:

Հանգուցեալի հասարակական գործունէութիւնից շատ բան-
կարելի է ասել, որ խրատական և օրինակելի կարող է լինել շատ
ազգայինների համար, սակայն մենք կարծում ենք՝ ապագայի գործ
է մանրամասն քննութեան ենթարկել այդ յայտնի գործչի հասա-
րակական կեանքը, որ գուցէ կարելի կլինի անել ապագայում:

Իսկ առ այժմ՝ կարող ենք ասել, որ հանգուցեալը մի վերին
աստիճանի բարեպաշտ և հեղահամբոյը ընտառութեան մարդ էր,
չափազանց ընտանեսէր և նորա այդ յատկութիւնները արտափայ-
լել են նաև իւր որդիների վերայ:

Հանգիստ նորա աճիւններին:

ԱՇՂ-ԶԻՒԱՆԻ

Ամսոյս 24-ին Թիֆլիսում վախճանուեց ժողովրդական յայտ-
նի երգիչ Աշղ Զիւանին:

Աշուղներ շատ են եղել հայերի մէջ և շատերն էլ մեռել.

բայց հազիւ թէ մէկը նոցանից այս ժողովրդականութիւնը լինի ունեցած, ինչ որ ունէր հանգուցեալ Զիւանին. Դորա պատճառը այն չէր, որ նա շատ մեծ տաղանդի կամ բարձր զիտութեան տէր մարդ էր, ոչ, այլ այն, որ սազը ձեռին մի քանի տասնեակ տառի շրջում էր պմին աեղ և իւր բնական քանքարով շարահիւսեւ լով ժողովրդական երգեր՝ երգում էր նոցա ցան ու վիշար, ու բախութիւնն ու ցնծութիւնը, և ժողովրդուն էլ հէնց այս է սիրում. նա գնում է նոցա ետևեց, ովքեր կարեկից են նորա աըրամութեան և խնդակից նոցա ուրախութեան. Աշող Զիւանին այդպիսի հզակի մարդկանցիցն էր Եւ Եւ ժողովրդը զիտեցաւ գնահատել նորա զգացմունքները ի հարկէ... մահից յետոյ հազարաւոր ամբոխով լցնելով վանքի բակը և ուղեկցելով նորա յուղարկաւորութեան:

Զիւանին, ծննդիամբ Սերոր Լևոնեան, Կարնոյ 1829 թուի գաղթականներից սերուած՝ իւր կեանքի մեծագոյն մասն անցրել էր Ալեքսանդրովում, իսկ վերջին տարիներս միայն Թիֆլիսում. Նա կանոնաւոր ուսում ի հարկէ, չէր ստացել, զրագիտութեան մէջ վարժուելով իւր բնական շնորհրով սկսել էր զրել ժողովրդական երգեր, որոնց ժողովածուն մի քանի տարի առաջ սկսեց հրատարակել նորա որդին՝ պ. Գարեգին Լևոնեանը, բայց յաջողեցաւ միայն առաջին պրակը լոյս ընծայել, իսկ մասցեալ, կարծեօք ինն պրակները մնացին մինչև այժմ, անտիպ.

Բացի այս երգերից Աշող Զիւանին ունի թուրքերէնից բաւական յաջող թարգմանած և մի քանի հրատարակութիւններով տպագրուած «Աշող Ղարիբի» հեքիաթը, «Քեարիմի» և Ասլիի հէքիաթը, և այլ մի քանի գրքոյներ, որ ժողովրդը հազարաւոր օրինակներով էր սպառում:

Բնական էր ուրեմն, որ այսպիսի մի համեստ բայց բուն ժողովրդական աշուղի թաղում կատարուէր այնպիսի շքով, որի նմանը բիչ է տեսնուում առհասարակ, թէպէտ և սխալուած չենք լինի ասել, որ նոյն այդ շքով թաղող ժողովրդը անմիտիթար սպանեց նորան. Հնաւատացողը թող կարդայ բժ. Բ. Նաւասարդեանի կոչը «Աշող»-ում, որից յետոյ նոյն իսկ կարծում ենք՝ միայն... երեք բուրքի ուղարկող եղաւ ժողովրդի վիշտն ու թախիծը երգող աշուղին:

